

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:
Օտարաբարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Քաջի կիրակի եւ տօն օրերից):
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն յետոյ:
Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թուին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գորուցի:
Ներքին լուրերը.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆե-
րանսիա. Հայոց խնդիր. Անգլիա. Գերմանիա.—
ՀԵՌԱԿԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՐՈՒՅՑ

Օգոստոսի 3-ին

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է
Ուփլիսցիէի գիւղը, որ գտնվում է Գորուցի գե-
պի արեւելք 5 վերստ հեռավորութեամբ: Ընթեր-
ցողը նոյնպէս գիտէ, որ այս գիւղի հայերը յու-
նադաւանութիւն էին ընդունում այնտեղի ծխա-
տէր Բարսեղի քահանայի վատ վարմունքի
պատճառով: «Մեղուն» ուղում էր այն լուրը
փարատել, բայց ինչպէս կը փարատէր երբոր
հաստատ լուր էր:

Ուփլիսցիէի գիւղի բնակիչները բոլորը հայեր
են, և այնտեղ ոչ մի վրացի չը կայ: Վրացիներ-
ից ոչ մէկը չէ համարձակվում գնալ և բնակվել
այնտեղ, որովհետեւ վախենում են այն խօսքից,
որ ասում են թէ եթէ վրացին գնալ և բնակվի
այնտեղ կենդանի չի մնալ: Ասում են իբր թէ
երբեմն վրացիք գնացել են այնտեղ բնակվելու,
բայց չէ անցել մի փոքր ժամանակ ետքը կո-
տորվել են: Ուփլիսցիէի բնակիչները նեղ տեղ
ընկնելով իրանց քահանայից, խնդրի էին տուել
հոգևոր իշխանութեանը, որով խնդրում էին հե-
ռացնել այն քահանային, ապա թէ ոչ պատ-
րաստ էին ընդունելու յունադաւանութիւն:
Խնդրի հետ ուղարկել են իրանց ուղղած Թիֆլի-
սի նահանգապետին խնդրի պատճենը, որով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

(Վերջ)

«Տեսնելով» որ շատերը մեզ չեն հասկացել և
գուցէ շատերը չեն համակրեր մեր կանոնադրի
զանազան կէտերին, մենք որոշեցինք մեր ազգա-
յին լրագրերի միջոցաւ յայտարարել ընկերու-
թեան նպատակը և նորա կանոնադրութեան
գլխաւոր կէտերը մեր ազգայնոց և խոնարհարար
խնդրել թէ բարեխիտ խմբագիրներէն և թէ առ-
հասարակ բարեպաշտաւ ազգայիններէն, որ նրանք
չը խնայեն մեզմէ իրանց կարծիքը և դիտողու-
թիւնները, տան մեզ խորհուրդ և ցոյց տան մի-
ջոցներ գործը առաջ տանելու: Ներկայ տարւոյս
սեպտեմբեր ամսոյ 11-ին, ընկերութեան տարե-
կարծի օրը, մենք ընդհանուր ժողով մի պիտի
անենք և մեր կանոնադրել պիտի վերանայնենք,
յուսմամբ, որ մինչև այդ օրը մեր ազգայինը չեն
վաճար մեր խնդիրը կատարել, քիչապէս է ձեր
կարծիքը, բարեկամ, այս գաղափարի մասին:

—Շատ գեղեցիկ միտք է, պատասխանեցի ևս,
բայց էլի մտքովս անցաւ, խեղճ, խեղճ երկտա-
սարդներ, ինչպէս աղին է ձեր սիրտը և միան-
գամայն ինչպէս պարզ, դուք կարծում էք թէ
ձեր յայտարարութեան միւս օրը աշխարհիս
չորս կողմէն վեր կը կենան հայերը ու իրանց
առողջ դատողութիւնը, իրանց օգտակար խոր-
հուրդները ձեզ կառաջարկեն, բայց «թէ իսկ
ինն է, նորա զօրութիւնը ես գիտեմ», ձեր ձայնը
կը լինի ձայն բարբառոյ յանապատի. այո, կը

խնդրում էին նահանգապետից իրաւունք տալ ի-
րանց ընդունել յունադաւանութիւնը: Բայց
վերջը իմանում ենք, որ թէպէտ նահանգապետի
խնդրի պատճենը ուղարկել են հոգևոր իշխա-
նութեանը, բայց նահանգապետին իսկական խն-
դիրը այլ ևս չեն ուղարկել:

Հոգևոր իշխանութիւնը լսել է Ուփլիսցիէից
խնդիրը և Բարսեղի քահանային Ուփլիսցի-
էից տեղափոխել է Գիւրը գիւղը, որ գտնվում
է Գորուցի 30 վերստ հեռավորութեամբ: Լսում
ենք, որ Բարսեղի քահանայի իմանալով Բարսեղի
քահանայի վատ վարմունքը և Գիւրի հեռաւո-
րութիւնը Տիֆլիսից, որ չէ կարողանում 30
վերստից գալ և հովուել իրանց՝ չեն ընդունում:
Ի հարկէ տիկնիսիդեցիք չեն կարող առանձին
քահանայ պահել և սրանք ուղում են որ իրանց
հովուի Գորու քահանաներից մէկը լսել Ուփլի-
սցիէից ընդունում նշանակվեց Գիւրի Գուրեանց քահա-
նա, որը Բարսեղի քահանայից առաջ հովում էր Ուփ-
լիսցիէից ինքնին: Լսում ենք, որ Գուրեանցին
Ուփլիսցիէի նշանակելու ժամանակ Մամբրէ
վարդապետը պայման է կապել նրա հետ, որ 120
ր. ուղարկի իրան, հակառակ դէպքում կը տե-
ղափոխվի Տղվիւ գիւղը, որ գտնվում է Գորուցի
12 վերստ հեռավորութեամբ: Գուրեանց քահա-
նան չունենալով այդքան փող, որ միանուագ ու-
ղարկէր Մամբրէին, ուղարկել է Մամբրէին միայն
30 ր. Միքայէլ քահանայ Սիմէօնեանցի ձեռքով,
որը կարծեմ հէնց այդ նպատակով էր ուղարկած
Մամբրէից, իսկ մնացած 90 ր. խոստացել է յե-
տոյ ուղարկել և չը գիտեմ այն էլ ուղարկեց թէ
ոչ: Փառք ու պատիւ Թիֆլիսում Մամբրէ վար-
դապետին, իսկ էլմիա՞նում Մանուկին եպիսկո-
պոսին: Այժմ Գուրեանց քահանան յունադաւա-
նութեան մէջ է, դեռ ինքն չէ ընդունել Ուփլի-
սցիէից մէկը ևս: Ինչպէս է իմանալով Տղվիւ: Ի
հարկէ այդ կախված է Մամբրէից: Խեղճ ժո-
ղովուրդն էլ չէ իմանում թէ ինքը լիակատար
իրաւունք ունի իր հովուը ընտրելու և ոչ թէ

էլմիա՞նը: Երբ Գուրեանցը տեղափոխվեց Ուփ-
լիսցիէի գիւղը, Գիւրեանցի յունադաւանութեան
ցին, վերջապէս ինչպէս որ եղաւ այս քահանան
համոզեց նրանց թէ հոգևոր իշխանութեան կամ-
քն այսպէս է:

Այս տարի վառեան գիւղում, որ գտնվում է
Գորուցի գեպի արեւմուտք 8 վերստ հեռավորու-
թեամբ, ընդունել է յունադաւանութիւն Միքա-
լը խիզանեանց անունով մի մարդ իր ընտանի-
քով: Սրա պատճառն այն է որ Բուխի գիւղի
Յարութիւն քահանան, որ հովում է և վա-
ռեանցիներին, լաւ չէ վարվում ժողովրդի հետ
և ամենայն ինչ ուղում է կողոպտել նրանցից:
Միքալը խիզանեանց կալի ցորեն պարտ է եղել
այս քահանային և չէ ունեցել որ տար և խոս-
տացել է տալ, եթէ փոքր ինչ կը սպասի: Բայց
սա չէ սպասել և ստիպել է որ անշուշտ շուտով
տայ, եթէ ոչ ոտ չի դնի նրա տունը: Այսպէս
էլ եղաւ: Չանցաւ մի փոքր ժամանակ, այս
մարդը որդի ունեցաւ և հրաւիրեց իր քահանա-
յին որ տուն օրհնի, բայց քահանան չէ գնում:
Այստեղի գիւղերում այնպիսի սովորութիւն կայ,
որ երբ երեխան ծնվեց, եթէ խելոյն տունը չը
օրհնվի, պիղծ են համարում այն տունը և ոչ ոք
չէ համարձակվում գնալ այնտեղ մինչև չօրհն-
վի: Խիզանեանցը ճարահատեալ դարձեալ հրաւի-
րում է իր քահանային և ասում է թէ եթէ դու
չես գալ՝ վրաց քահանային կը բերեմ, դարձեալ
չէ գնում: Վերջապէս խիզանեանցը յունադաւա-
նութեան հանում է չորերը կանգնում է առուակի
ափը, հրաւիրում է վրաց քահանային և մկրտ-
վում է վրաց ծէսով, սրան հետևում է և իր ըն-
տանիքը, հետևելու են և միւսները, նրանք էլ
նեղացած լինելով Բուխի Յարութիւն քահանա-
յից: Այսպիսի օրինակներ շատ կան, բայց ո՞ր
մէկն ասեմ, կամ ո՞ր մէկը գրեմ:

Կարծում ենք սրա վրա հոգևոր իշխանու-
թեան ուղարկութիւնը և խնդրում ենք որ ու-
ղարկութիւն դարձնի հայ դաւանների վրա, իր

որդոց վրա, հետաքրքրվի այս բաներով, տեղու-
թիւն անի, խնամք տանի, արժանաւոր քահա-
նաներին վարձատրի և անարժաններին պատժի:
Թէ չէ վրաստանի գիւղերի հայերը կորած են
թէ կրօնով և թէ ազգով, որովհետեւ ով որ հայ-
լուսաւորչականերից մի այլ դաւանութիւն է ըն-
դունում, կարծում է թէ ազգով էլ փոխվեց,
Կարծեալ խնդրում ենք հոգևոր իշխանութեանը,
որ շուտով նշանակի այստեղ մի օրինաւոր յա-
ջորդ, և մի և նոյն ժամանակ հրամայի մանգալ
գիւղերը և ոչ թէ տանը նստի և աչքերը դէպի
դուռն ունենայ դարձած թէ արդեօք գիւղի քա-
հանաներից ոչ մէկը չէ գալիս ընծաներով: Յա-
ջորդի պարտքն է հոգևոր կառավարութեան կա-
նոնաւոր ձև տալը և մանգալ գիւղերն և այսպի-
սի խռովութեանց և անբաւականութեանց ա-
ռաջն առնելը:

Գրեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Որ չէ անցնում որ մեր խմբագրատանը չը
ներկայանային խնդրատու բազմաթիւ մարդիկ,
որոնցից մինը նիւթական օժանդակութիւն է
խնդրում, միւսը խնդրում է որ մենք պաշտօն
տանք նրան, երրորդը որ մենք նրա որդուն ու-
սում տանք, և այլն: Ո՛ր են մեր հարուստնե-
րը, ո՛ր է մի հայոց բարեգործական ընկերու-
թիւն: Մենք մեր կարողութեան չափ արդէն ա-
նում ենք՝ համ թան աք ով, գրչով ենք աշխա-
տում, համ էլ մեր գրպանից հազարներ ենք դը-
նում լրագրի դէֆիցիտի վրա: Մնացածը թող
ուրիշներն անեն:

Յայտնի է որ այս րօպէիս կան Ռուսաստա-
նում չորս թէ հինգ հրէական օրգաններ ուսե-
րէն լեզուով, որոնք ամեն հարցերում քաջու-

րելու վրա, թողնենք դրանց հանգիստ և մեր աչ-
քերը դարձնենք մեր մշակ, երեսի քրտինքով օ-
րական հացը վատաւորող եղբայր վրա: Մեր, այ-
սինքն, ազգի ոյժը նրանք են, ձեզ համակրող և
ձեզ նպաստող նրանք են, նրանց քրտնքի կա-
թիլներն են, որ հատիկ հատիկ թափվելով ազ-
գային աւազանի մէջ՝ կազմում են յորդանոս ա-
ռու և լուսնում, մաքրում ազգի վերքերը, նրանք
են ազգի այն գետակները, որ իրանց արագ ըն-
թացքով պտտոցնում են ազգի ջաղացները, մինչ-
դեռ մեր խնդիրը ինչպէս պատկանող պարոն-
ները ազգի համար ուրիշ ոչինչ չեն, բայց եթէ
այն լճակները, որոնք գեղեցիկ մարգագետինների
վրա զետեղված՝ միայն անցուղաբռնողների աչ-
քերին գեղեցիկ տեսարան են ներկայացնում, ո-
չինչ օգուտ չը բերելով, դրանց ջուրը անգամ չէ
կարելի խմել, որովհետեւ միշտ մէկ տեղ կանգնե-
լով և չը նորոգվելով՝ նա հոտել է: Եթէ ասածս
ստուտ է և զրպարտութիւն ապա թող ապացու-
ցանեն այդ պարոնները դորա հակառակը, թող
ցոյց տան դրանք փարիլի ուսանողներին իրանց
համակրութիւնը նրանց ընկերութեանը նպաստե-
լով: Բայց ցոյց տան գործով և ոչ միայն խօս-
քով, ահա լաւ պատիւ: Ընկերութիւնը կարօտ է
թէ նիւթական օգնութեան, թէ հիմնաւոր, ա-
ռողջարար խորհուրդների, թող սթափեն դրանք
իրանց վրայից այդ սպանիչ անտարբերութիւնը
ու մահացուցիչ թմրութիւնը և ձեռք կառկառեն
իրանց եղբայրներին, մի խօսքով թող ճանչնան
և կատարեն իրանց բարոյական պարտքը: այն
ժամանակ ես մեղայ կը գամ դրանց առաջ և
դրանց ձեռքերը համարելով ներողութիւն կը
խնդրեմ սխալմանս համար:

Փարիլ գտնվելով՝ ես չէի կարող օգուտ չը
քաղել հանգամանքէն և չայցնել մեր վերջին
թագաւոր Լևոն Զ-ի գերեզմանը, ուստի մէկ օր
պ. Ռաֆայելեանի ընկերութեամբ գնացի Սէն-Կէ-

Թեամբ պաշտպան են հանդիսանում հրեաների իրաւունքները, Բայց Մոսկովայի կամ Ս. Պետերբուրգի հարուստ հայերից ոչ մին չը գտնուեցաւ որ այնքան ազնիւ լինէր ուսանելու լեզուով թէ կուզ մի չարախախտութիւն հիմնուէր, որ լինէր հայոց օրհան, ինչպէս մենք շատ անգամ առաջարկեցինք: Մենք Անանովի կամ Սանասարովի պէս միլիոններ չունենք, բայց միզանից, Թիֆլիսի հայ խմբագիրներէն ամեն մէկը հազարներ է դոնում իր հրատարակութեան տարեկան դէֆիցիտը ծածկելու համար, իսկ մի Անանով, մի Սանասարով, որոնք միլիոններ ունեն, միթէ նոյնը չեն կարող անել, մանաւանդ որ մի փոքր շարաքաղութիւն շատ ծախս էլ չի պահանջի: Այդ տեսակ շարաքաղութիւն անվարձ թղթակցներ կունենայ ամեն կողմից, մենք մեր կողմից խոստանում ենք այնքան թղթակցութիւններ ուղարկել, որ հազիւ թէ կը տեղաւորուին շարաքաղութիւն մէջ: Ամօթ հարուստ հայերէն, եթէ այդ տեսակ գործ չը կատարեն:

Ռուս լրագրիւնները հազորդում են որ Նէժին քաղաքում պատահել է այս օրերս հրեաների մի սարսափելի վարդ: Հրեաների բոլոր խանութները և տները ոչնչացրած են, նրանց ապրանքները ջուրն են նետված: Անկարգութիւնը դադարեցրած է գործերի միջամտութեամբ:

«С. Петерб. Вѣд.» լրագրիւնը հազորդում է որ Ս. Պետերբուրգում դիտաւորութիւն կայ հիմնելու մի բերս անգրագէտ մարդկանց համար խնդիրներ և նամակներ գրելու համար:

Մեզ պատմում են որ մի թիֆլիսեցի ծնողական կին դիմում է մի քահանայի հազորդելու: Համար քահանայի հարցնում է արդե՞ք խոստովանվել է կինը: Սա պատասխանում է. «Իմ խիղճս աւելի հանգիստ է չը խոստովանված սուրբ հազորդութիւնն ընդունել, քան թէ չուրքել այժման մեր քահանայների առջև, որոնք հասարակ մահկանացուներից էլ աւելի անբարոյական են. իմ խիղճս չի ների ինձ այդ տեսակ հովիւներին իմ մեղքերս խոստովանելու առաջ խնդրելու դրամիցէք, յետոյ մեզ խոստովանեցէք»: Այդ լսելով քահանայն մեղմում է հազորդութիւն տալ ճշմարտախօս կնոջը:

ՇԱՄԱԽԻՅ մեզ գրում են: «Կառավարութեան թոյլտուութեամբ 1880 թի սեպտեմբեր ամսից բացված են Շամախու քաղաքային ուսումնարանում մանկավարժական կուրսը»:

Նի, որը փարիզէն մօտ մի ժամուկ հանապարհ է: Հոյակապ եկեղեցին մտանք թէ չէ՝ պահպանը մեր առաջը ընկաւ և միայն գաղղիացուն յատկացեալ քաղաքավարութեամբ մեզ ցոյց տուեց ամեն բան երկար ու բարակ պատմութիւններ անելով ամեն մի թագաւորական դարձարանի, ամեն մի արքայազնի գերեզմանի առաջ, փոքրիկ խաչ մի, արքայական թագ մի, ժանգոտված պղնձէ ճրագակալ մի չը մնաց, որի հետ մեզ չը ծանօթացնէր պերճախօս գաղղիացին: Մէկ ժամէն աւելի պտուղները մեզ նա եկեղեցու մէջ, բայց տակաւին լսոնի անունը չարտասանեց: Վերջապէս նա քաղաքավարութեամբ մեզ գլուխ տուաւ ասելով՝ որ մենք բոլորը տեսանք. իսկ հայոց թագաւոր լսոն Զ-ի գերեզմանը հարցրի ես: «Ախ, պարտաշ, ներեցէք, ես չը դիտէի, թէ դուք հայ էք, որովհետեւ միայն հայերը երբեք գալով այստեղ հետաքրքրվում են տեսնել իրանց թագաւորի գերեզմանը, այս ասելով նա մեզ տարաւ դէպի եկեղեցու ձախ կողմի մի խորշ, որտեղ միայնակ գտնվում էր լսոնի գերեզմանը: Գերեզմանի վրա պարկած է լսոն Զ-ի սպիտակ մարմարեղէն, մարդահասակ արձանը՝ թագը գլխին և զաւաղանը ձեռքին: Ինչպէս զարմացայ, երբ տեսայ, որ գերեզմանի արձանագիրը միայն գաղղիներն է, իսկ հայերն մի բառ անգամ չը կայ: 1393 թ.ականէն մինչև այսօր քանի քանի հայեր են եղել փարիզ և գնացել այդ գերեզմանը տեսնելու, միթէ և ոչ մէկի մարմը չանցաւ մի փոքր քարէ կամ պղնձէ տախտակի վրա փորագրել տալ հայերէն բառերով մեր վերջին թագաւորի անունն ու մահուան թուականը և տեղաւորել տալ գերեզմանի վրա, միթէ դրա համար էլ մեծ ծախս է պէտք: Դ՛հ, օրքան անհոգ ենք մենք, հայերս...»

Գեռ Նիս եղած ժամանակս բաղդ ինձ յաջողեց ծանօթանալ մի պոլսեցի հայրենասէր և

ըր, որտեղ պիտի պատրաստվեն զիշական կամ ծխական դպրոցների դաստիարակչներ: Այդտեղ ընդունվում են թէ քաղաքային դպրոցի վերին, այսինքն երրորդ դասարանում աւարտողները և թէ նրանք, որոնք կարողանում են հարցաքննութիւն տալ: Այս տարի այդ մանկավարժական կուրսն ուսուցանողներն իրանց ուսման ընթացքը 6 ասակերտներ, որոնցից հինգը հայեր են և մի ուսուցիչ: Սրանցից միայն երեքը, որոնց թիւում և ուսուցիչն աւարտողը, նիւթական միջոցներ ունեն, որ կարողանան մտնել ուսուցչական խնութիւն տուր, իսկ մնացած երեքը, ինչքան էլ ուղենալին շարունակել իրանց մանկավարժական կրթութիւնը, անկարող են, կատարելապէս չբաւար լինելով: Վատ էլ էր լինի եթէ մեր դրամատէրերը նիւթական օգնէին նրանց իրանց նպատակին հասնելու համար: Ուր է մի հայոց բարեգործական ընկերութիւն:

Մեզ գրում են ԿՈՒԼՊԻՅ հետեւելով. «Ձեր լրագրի № 107 մէջ կարդացի իզդրից գրած նամակը աղանաւութեան մասին, որի մէջ նամակագիրը առաջարկում է 16 հարցեր, որոնց ես ժամանակով գուցէ կը պատասխանեմ մանրամասնաբար:

«Новости» լրագրիւնը հազորդում է որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի մտնել Լեհաստանում տեղական լեզուով դաստաւորութիւնը տարրական դպրոցներում, ընդարձակել լեհական լեզուի, գրականութեան և պատմութեան մատակարարութիւնը միջնակարգ դպրոցներում և ընդարձակել Լեհաստանի մասով լի ազատութեան իրաւունքը: Վարչական գեներալ-նահանգապետի Ալեքէյնսկու Ս. Պետերբուրգ գալը, ասում են, կապ ունի այդ մտադրված րէֆորմաների իրագործման հետ:

Ռուսաց ամբողջ ազատամիտ մամուլը, առանց քննելու «Գօլոս» լրագրի դադարման հիմնական պատճառները, խոր ցաւակցութիւն է յայտնում նոյն իսկ այդ լրագրի վեց ամսեայ դադարման առիթով: «Русский Курьер» նուիրել է այդ հարցին մի առաջնորդող յօդուած, որի մէջ, ինչպէս և «Порядок», «Страна», «Московский Телеграф» և ուրիշներ, ցանկութիւն է յայտնում որ վերջապէս լրագրութիւնը ազատվի աղմուխտարացիայի կամայականութենից և ենթարկվի դատաստանական իրաւասութեանը:

պատուարժան հայի հետ՝ պ. Զուռը անունով, որը բաւականին գործած է աղգային գործող մէջ և ամեն աղղոգաւ սկզբանց մէջ պարագլուխ է կանգնած, թէպէտ և շատերի նման փող փչել և թմբուկ զարնել չէ տուած: Երբ մենք կը պատահէինք միասին, որ կը լինէր բաւական յաճախ, պարոնը միշտ կը խնդրէր ինձ պատմել մեր աղգային հերոսների վրա, որոնք հրաշակաւոր եղան վերջին ուսուցիչական պատերազմի ժամանակ և երբ ես կը պատմէի կոմս Լորիս-Միլիքովի, Լազարեւի, Տէր-Ղուկասովի և Շօլիքիւիկովի արածները՝ կը տեսնէի թէ ինչպէս ծերունու աչքերը կը վառվէին, թէ կը կարմրէին ու, կարծես, մարդը կայտառ երիտասարդի մի կը վերափոխվէր: Որ մի բարեբաղդաբար պատահեցի այս ծանօթիս փարիզի փողոցների մէկուն մէջ, «դուք ինձ ծանօթացրիք ձեր երեւելի և մեզ սիրելի գեներալների հետ, ասաւ նա ինձ ձեռքս առնելով, այժմ կուգեմ ես ձեզ անձամբ ծանօթացնել մեր երեւելի փառայի հետ, եթէ ընդդէմ ոչինչ չունէք»: Պարոն խօսքը Եւրօպային լաւ ծանօթ և մօտիկ ժամանակներս Եգիպտոսում մեծ դեր խաղացած հայազգի Ն. փառայի համար էր, որուն տեսնելը ի վաղուց ինձ հրաւիրել էր ինքն ինքն, որովհետեւ հասկանալի է թէ ինչ սիրով ես ընդունեցի այդ առաջարկութիւնը: Փառայն մեզ ուրախութեամբ ընդունեց և չը նայելով ոչ իր տարիքին և ոչ բարձր աստիճանին մեծ սիրելիութիւն ցոյց տուաւ (դա ինձ համար մէկ նոր բան էր, որովհետեւ յայտնի է թէ հայ աստիճանաւորը ինչ արհամարհանօք է վարվում իրենից ստորինի հետ): Առաջին վարկեանէն ես գրավեցի փառայէն, որովհետեւ ուշադրութեամբ տնդրելով նրա դէմքի զմայրութիւնը, ես նմանութիւն գտայ լուսաւորի Արզաս Արաբիւի Տէր-Ղուկասովի հետ, իսկ այս վերջինս որքն չէր գրա-

վիշնայի «Journal d'Orient» լրագրիւն արդէն սկսել է տպել յօդուածներ հայերի մասին: Այդ յօդուածներից մինը «Մասիս» լրագրիւն արդէն արտատպել էր իր յուլիսի 30-ի համարում: Մեզ խնդրում են յայտնել որ ինչեւ լրագրին գրվել ցանկացողները թէ մի ամբողջ տարով, թէ վեց ամսով, կարող են փողերը (8 րուբլ կամ 4 րուբլ) իրանց հասցէի հետ միասին ուղարկել կամ «Մեշակի» խմբագրութիւնը, կամ ուղղակի Վիշնայ, բայց ոչ թէ անմիջապէս «Journal d'Orient» լրագրի խմբագրութիւնը, այլ հետեւեալ հասցէով: Вѣна (Австрія) М. Н. Новханнян, pour remettre au «Journal d'Orient» փողի հետ, թէ մեզ, թէ Վիշնայ, բաժանորդը անպատճառ պէտք է ուղարկէ և իր հասցէն:

«С. Петерб. Вѣдомости» լրագրի № 177 մէջ տպվեցաւ մի բանասիրական «Археологическія свѣдѣнія въ Тифлисѣ» վերնագրով: Գրողը իրանց ցոյց է տալիս լեզուագիտութեան և հնագիտութեան մէջ հմուտ անձն, բայց դարմանալի է որ այդ յօդուածի և «Голосъ» լրագրի № 144 թղթակցութեան մէջ էմինի դէմ, որ մենք արտատպեցինք «Մշակի» մէջ, մեծ նմանութիւն ենք գտնում ոճի, գրելու ձևի վերաբերութեամբ: Նոյն հայհոյանք, նոյն կօպիտ վարմունք էմինի դէմ: Գուցէ էմինը մեծ սխալներ էլ անում է իր գրուածքի մէջ Մովսէս Խորենացու վերաբերութեամբ, բայց մենք դարձեալ չենք հասկանում ինչ նպատակ պէտք է ունենայ մարդը այդ աստիճան հայհոյական ոճով գրելու, խօսելով ծանր, լեզուագիտական, պատմական և հնագիտական հարցերի մասին: Կարելի էր քննադատել սառը և քաղաքավարի կերպով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻՍ

Բելգիական «Independance Belge» լրագրում կարգում ենք հետեւեալ դատողութիւնը:

Գտմբէտտայի ծուռը, որ նա ասեց Տուրի մէջ, ոչ ոքին չը բաւականացրեց: Հանրապետականները դժգոհ են, մանաւանդ արմատական հանրապետականները: Ոմանք ասում են թէ նա շատ քիչ է խօսել, ու-

սում միմիայն իր գեղեցիկ և իմաստասլից աչքերով: Մի կողմ թողնելով նրա առաքինի յատկութիւնները: Մի քանի ընդհանուր հարցմունքներից յետոյ փառան ցանկութիւն յայտնեց իմանալ ուսաւարեալ հայերի ներկայ անտեսական, քաղաքական և մտաւորական դրութիւնը. ես մի քանի խօսքերով նկարագրեցի այդ դրութիւնը, ասելով՝ որ ուսաց օրէնսդրութեան ու ներքին քաղաքականութեան առջև ոչ մի զանազանութիւն չը կայ բնիկ ուսուի և այլազգի հպատակների մէջ, ուրեմն վերջիններիս դիմաց արձակ համարձակ բաց են այն բոլոր ճանապարհները, որոնք տանում են դէպի լուսաւորութիւն և բարօրութիւն: «Ես էլ այդպէս էլ կարծում, որովհետեւ ուսաց տէրութիւնը եւրօպական քաղաքակրթեալ և արդարադատ տէրութիւններէն մէկն է, այժմ ձեր խօսքերէն աւելի համոզվեցայ, ասաւ փառայն և ավելորդ առաջ քաշեց, բայց ասեք խնդրեմ, արդե՞ք ձեր հայերը փոքր ի շատէ հետաքրքրվում են իրանց թիւրքիսեալ եղբարց դրութիւնով, թէ բոլորովին մոռացել են նրանց»: Ես իսկոյն չը պատասխանեցի այս հարցին, այլ մի խոր հայեացք ձգեցի հարցնողի վրա, կուգէի իմանալ այդ իսկ նրա ցանկութիւնն է, թէ միայն ինձ, իբրեւ իր հիւր խօսակցութեամբ զբաղեցնելու համար է: Փառայն անհանգիստ էր. նա անհամբերութեամբ սպասում էր պատասխանին: «Թիւրքիսեալ հայերի դրութիւնը այսօր մեզ համար օրական հարց է դարձել. մեր սեփական պիտոյքները այնքան մեր աչքով չեն գալի, որքան այդ տառապանքների անեղք դրութիւնը, սրա ապացոյց թող լինի այն ահալին օգնութիւնը, որ մենք արինք անցեալ տարուայ սովի ժամանակ (վայ իմ հոգուն, այստեղ փոքր ինչ չափիցն անցայ), բայց բացի նիւթական մենք ուրիշ միջոց չունենք նրանց օգնելու և եթէ բոլորովին յուսակ-

մանք պնդում են թէ շատ երկար է խօսել: Արմատական կուսակցութիւնը իր օրգաններում մեղադրում է Գտմբէտտային, թէ նա ձգտում է դէպի զիկտատուրա: Բայց, աւելացնում է լրագրիւնը, Գտմբէտտան այնքան զգոյշ է, որ այդ տեսակ վսալ և փտանգաւոր ընթացք չի բռնի:

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

«Донская Пчела» լրագրիւն տպել է հետեւեալ հեռագիրը: «Բերլինից հեռագրում են Standart անգլիական լրագրին, թէ մինչև որ լուր Գիւլֆերին ճնշում է ներգործում թիւրքաց կառավարութեան վրա թիւրքաց Հայաստանի մէջ րէֆորմներ մտնելու վերաբերութեամբ, այդ ժամանակ պատմում են իբր թէ կոմս Լօրիս-Մեշակով գրել է մի նամակ Ներսէս պատրիարքին և Պօլիս, որի մէջ նա համոզում է սրբազանին այլ ևս չը պահանջել րէֆորմներ, որոնց իրագործելը կարող էր միայն թիւրքիայի իշխանութեանը աւելի ոյժ տալ: Կոմսը իբր թէ աւելացնում է իր նամակի վերջը, որ մօտ է այն ժամը, երբ Հայկը բոլորովին ազատված կը լինեն օսմանեան լուծից»: Այդ լուրից «Донская Пчела» լրագրիւն եղբարեակում է, որ երեւ եւրօպական պետութիւնները վճռել են ոչ թէ րէֆորմներ պահանջել թիւրքաց Հայաստանի համար, այլ վերականգնեցնել թիւրքաց Հայաստանի կատարեալ քաղաքական անկախութիւնը: Այդ միտքը ուսաց լրագրիւն յայտնում է իր № 57 մէջ (օգոստոսի 2-ին), իսկ մի քանի համարներից առաջ նոյն «Донская Пчела» և ուրիշ ուս մի քանի լրագրիւններ տպել էին այն լուրը, թէ որովհետեւ մինչև այժմ թիւրքիսն պարտ է Ռուսաստանին պատերազմական ծախսերը (կոնտրիբուցիա) և այդ ծախսերը չէ վճարում, Ռուսաստանը դիտաւորութիւն ունի այդ ծախսերի հաշւում պահանջել թիւրքաց Հայաստանը, և այդ երկիրը միացնել Անդրկովկասին: Եթէ ուղիղ

տուր չենք մի օր նրանց վիճակը բարեբաղդ տեսնելու, այդ էլ նրա համար է, որ մեր յոյսերը ձեղպիսի անձանց վրա է, փառայ, ձեր սնունդը լաւ ծանօթ է Եւրօպային և եթէ կամենաք, կարող էք օգնել ձեր աղգին»:

Այժմ հերթն իմն էր, ես էի սպասում նրա պատասխանին և լաւ նշմարեցի, թէ ինչպէս իմ վերջին խօսքերը դուրեկան չէին պարոնին, բայց նա հարկադրված էր մի բան ասել. ուսուի ուսերը վերջապէս ու փոքր ինչ ձայն բարձրացնելով՝ ասեց. «Ինչ անեն մեզպէսները, երբ մէջ միաբանութիւն չը կայ, միթէ Բերլինի մեր մէջ միաբանութիւն չը կայ, միթէ մերայ աւագածողովի ժամանակ ես չը տուի մերայ նոց իմ ծրագրերը, *) որ չընդունեցին, որ իմ թողած, նրանք իրանց ներկայացրին, որ անարժան համարեցին ինձից խորհուրդ հարցնել, ես ինչ անեմ, ինչ մեզ ունեմ: Վերջինս երկու հոգեւորական ուղարկեցին աւագածողովին, ինչ չինեցին նրանք, Սան-Ստեֆանայի զայնադրութեան 16-որդ յօդուածը 61-ի փոխել տուին, մեծ բան արին, չէ բարեկամ»:

— Կատարելապէս իրաւունք ունէք դժգոհ լինելու, ձերը գերազանցութիւն, մերոնք մեծ սխալ արին, բայց այդ սխալը ոչ թէ գիտութեամբ արին, այլ անդիտութեամբ և այժմ արդէն ուշ է դրա ուղղելը, սակայն միթէ միայն մի հնար որ և իցէ կերպով նորէն հարցը առաջ դնել: «Իրա համար, պատասխանեց փառայ պէտք է որ կրկին մի աւագածողով լինի, առանձնոր ոչինչ չի լինի»: «Ինչպէս, բայց կանչեցի ես զարմացմամբ, ուրեմն պէտք է սպասենք, որ թիւրքը պատերազմ հրատարակէ մի տէրութեան հետ, կրկին աւագածողով լինի

*) Արթէ, որ այդ ծրագրի հետ ծանօթանայ ընթերցողը. յոյս ունեմ որ մի օր նա լոյս կը տեսնէ պատուական «Մշակի» էջերի մէջ: